319 Ինչքա՛ն բարի է Տերը,

1. Ինչքա՛ն բարի է Տերը,
Որ կրում է մեր բեռը,
Ամեն օր ու ամեն վայրկյան
Մեզ հետ քայլում է:
Ինչքան սիրով է Տերը,
Միշտ տեսնում ենք Իր սերը,
Ամեն օր ու ամեն վայրկյան
Նա մեզ սիրում է:
    Ամեն ծունկ պիտ կրկնվի,
    Ամեն լեզու դավանի՝
    Քրիստոսն է միայն Տերը
    Ու միակ Փրկիչ:

2. Նա է մարդկության հույսը,
Այս մութ աշխարհի լույսը,
Որ կբացի ու կփշրի
Ամեն կապանքներ:
Ո՞ւր է մահի խայթոցը՝
Մարդկության վերջակետը:
Փառք լինի Աստծո Որդուն,
Որ մեզ ազատեց:
    Ազատեց Նա մեզ մահից,
    Այս աշխարհի խավարից,
    Ուրախություն, խաղաղություն
    Բերեց մեր սրտին: